FLSP

7 (16) 2019 ISSN 1829-4065

FOREIGN LANGUAGE FOR SPECIAL PURPOSES

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
YEREVAN STATE UNIVERSITY

FOREIGN LANGUAGES
FOR SPECIAL PURPOSES

№ 7 (16)

YEREVAN STATE UNIVERSITY PRESS
YEREVAN 2019

ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐԸ ՄԱՄՆԱԳԻՏԱԿԱՆ

ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ

№ 7 (16)

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 2019

Recommended by the Scientific Council of the Department of European Languages and Communication, Yerevan State University, Republic of Armenia

Editor-in-Chief: **Margarita Apresyan**
Head of ESP Chair N 1, PhD in Linguistics, professor, YSU, RA

Honourable members of the editorial board:
Dora Sakayan
Doctor of Philology, professor, McGill University, Canada
Svetlana Ter-Minasova
Doctor of Philology, professor of Moscow State University, Dean of the Faculty of Foreign Languages,
Hans Sauer
Doctor of Philology, Institute of English Philology, Munich University, Germany
Charles Hall
PhD, associate professor of Applied Linguistics, University of Memphis, USA

Editorial board:
Jura Gabrielyan
Doctor of Philology, professor
Head of German Philology Chair, YSU, RA
Hasmik Bagdasaryan
Head of Romance Philology Chair, PhD, associate professor
Albert Makaryan
Doctor of Philology, professor, YSU, RA
Yelena Mkhitarian
Head of German Languages Chair, PhD, professor, ASPU, RA
Samvel Abrahamyan
PhD in History, associate professor, YSU, RA
Karo Karapetyan
PhD in Pedagogics, professor, YSU, RA

Foreign Languages for Special Purposes, Yerevan, Yerevan State University Press, 2019, p. 134.

FLSP international journal is a collection of scientific articles presented by FLSP practitioners inside and out Armenia targeting at professional experience exchange and concurrent development of FLSP methodologies.
Letters and articles for publishing should be sent to the editor-in-chief
E-mail: english@ysu.am, margaret.apresyan@mail.ru

© Apresyan, M. and others, 2019
© YSU press, 2019

Հրատարակության է երաշխավորել
ԵՊՀ եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետի
գիտական խորհուրդը

Գլխավոր խմբագիր՝ **Մարգարիտա Ապրեսյան**
ԵՊՀ անգլերեն լեզվի թիվ 1 ամբիոնի վարիչ, բան. գիտ. թեկն., պրոֆեսոր

Խմբագրական խորհրդի պատվավոր անդամներ՝ **Դորա Սաքայան**
բան. գիտ. դոկտ., պրոֆեսոր
Մքգիլ համալսարան, Մոնրեալ, Կանադա
Սվետլանա Տեր-Մինասովա
բան. գիտ. դոկտ.,
Մոսկվայի պետական համալսարանի պրոֆեսոր,
Օտար լեզուների ֆակուլտետի դեկան,
Հանս Սաուեր
բան. գիտ. դոկտ., պրոֆեսոր
Անգլիական բանասիրության ինստիտուտ, Մյունխենի համալսարան
Չարլզ Հոուլ
բ.գ.թ., կրտսեր պրոֆեսոր, Մեմֆիսի համալսարան, ԱՄՆ

Խմբագրակազմ՝ **Յուրա Գաբրիելյան**
ԵՊՀ գերմանական բանասիրության ամբիոնի վարիչ, բ.գ.դ., պրոֆեսոր
Հասմիկ Բաղդասարյան
Ռոմանական բանասիրության ամբիոնի վարիչ, բ.գ.թ., դոցենտ
Ալբերտ Մակարյան
բ.գ.դ., պրոֆեսոր, ԵՊՀ
Ելենա Մխիթարյան
ՀՊՄՀ գերմանական լեզուների ամբիոնի վարիչ, բան. գիտ. թեկն., պրոֆեսոր
Սամվել Աբրահամյան
պատմ. գիտ. թեկն., դոցենտ
Կարո Կարապետյան
մանկ. գիտ. թեկն., պրոֆեսոր

Օտար լեզուները մասնագիտական նպատակների համար, Եր., ԵՊՀ հրատ., 2019, 134 էջ:

Գիտական հոդվածների միջազգային պարբերականը նպատակ ունի հավաքելու և ներկայացնելու Հայաստանի և Հայաստանից դուրս «Օտար լեզուները մասնագիտական նպատակների համար» (FLSP) ոլորտի մասնագետների կողմից մշակած ժամանակակից մեթոդները՝ փորձի փոխանակման և դրանց հետագա զարգացման նպատակով:

© Ապրեսյան Մ. և ուրիշ., 2019
© ԵՊՀ հրատ., 2019

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ
CONTENTS

Խալաթյան Լ., Միրիմանյան Ս.
ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԹԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐ 8

Կարապետյան Մ.
ԻՐԱՎԱԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՄԻՋԳԻՏԱԿԱՐԳԱՅԻՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆ 19

Հովհաննիսյան Ա.
VO ԿԱՂԱՊԱՐՈՒՄՆԵՐԸ ԱՆԳԼԵՐԵՆՈՒՄ ԵՎ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ 28

Амирян Н., Дурасанян Н.
ИЗУЧЕНИЕ АНГЛИЙСКОГО ЯЗЫКА ДЛЯ ПРОФЕССИОНАЛЬНЫХ ЦЕЛЕЙ В КОНТЕКСТЕ АКТИВНОГО ИСПОЛЬЗОВАНИЯ ИНФОРМАЦИОННЫХ ТЕХНОЛОГИЙ В АрГУ 39

Жабо Н.И., Авдонина М.Ю.
ДИАЛОГ ЭКСПЕРТОВ: МЕТОДИКА СОСТАВЛЕНИЯ РЕЧЕВЫХ УПРАЖНЕНИЙ 51

Чернышева И.Б., Авдонина М.Ю., Жабо Н.И.
ПРЕДШЕСТВУЮЩЕЕ ПЕРЕВОДУ ОБСУЖДЕНИЕ НА РОДНОМ ЯЗЫКЕ СИТУАЦИИ И ТЕМЫ ТЕКСТА КАК ВАЖНЕЙШАЯ КОМПОНЕНТА СИСТЕМЫ ПЕРЕВОДЧЕСКИХ УПРАЖНЕНИЙ 70

Amiryan N., Durasanyan N.
ON SOME PROBLEMS OF TEACHING SCIENTIFIC-TECHNICAL TRANSLATION AT ARTSAKH STATE UNIVERSITY 84

Bekaryan N.
THE BASIC MODELS OF TEACHING ANALYTICAL READING
OF A FICTIONAL TEXT 98

Matevosyan A., Azizyan L., Vanesyan H.
LEGAL ENGLISH: LEXICAL AND
SYNTACTIC FEATURES 106

Hakobyan N.
THE INTERRELATION OF THE PHATIC AND INFORMATIVE
FUNCTIONS OF THE LANGUAGE IN ACADEMIC DISCOURSE 119

Խալաթյան Լ.
Միրիմանյան Ս.
Երևանի պետական համալսարան

ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԹԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐ

ABSTRACT
METODS OF TESTING STUDENTS' EDUCATIONAL ACTIVITIES

Testing as a method of knowledge control in teaching foreign languages is an integral part of teaching methods. It provides an opportunity not only to test the acquired knowledge of students, but also to use in practice various methods and approaches of training related to the achievement of goals and objectives. The article is devoted to the test control of the quality of knowledge in teaching foreign languages in the modern education system. The method of testing allows not only to consolidate the knowledge and skills, but also to identify gaps in students' material, allows the teacher to adjust the further curriculum in accordance with the results of the tests and pay more attention to poorly understood material. When preparing tests in foreign languages, it is necessary to select such tasks that cover all grammatical, lexical, phonetic aspects, offer students to perform several exercises on the same topic, minimize the chance when students choose any of the answer options. Test tasks activate mental activity, teach students to work independently.

Key words: *testing, teaching methods, skills, teaching process, motivation of learning process.*

РЕЗЮМЕ
МЕТОДЫ ТЕСТИРОВАНИЯ УЧЕБНОГО ПРОЦЕССА СТУДЕНТОВ

Тестирование как метод контроля знаний при обучении иностранным языкам является неотъемлемой частью методики преподавания. Оно дает возможность не только проверить приобретенные знания студентов, но использовать на практике различные методы и подходы обучения, связанные

с достижением целей и задач. Статья посвящена тестовому контролю качества знаний при обучении иностранным языкам в современной системе образования. Метод тестирования позволяет не только закрепить полученные знания и навыки, но и выявить у обучающихся пробелы в пройденном материале, он также дает возможность преподавателю скорректировать дальнейший учебный план в соответствии с результатами проведенных тестов и уделить большее внимание плохо усвоенному материалу. При составлении тестов по иностранным языкам необходимо подбирать такие задания, которые охватывают все грамматические, лексические, фонетические аспекты, предлагают учащимся выполнить несколько упражнений по одной теме, минимизировать случайность при выборе учащимися любого из вариантов ответов. Тестовые задания активизируют умственную активность, студентов к самостоятельной работе.

Ключевые слова: *тестирование, методы обучения, навыки, процесс преподавания, мотивация процесса обучения.*

ԱՄՓՈՓՈՒՄ

Օտար լեզուների գիտելիքների ստուգման թեստավորումը դասավանդման անբաժանելի մասն է: Այն հնարավորություն է տալիս ոչ միայն ստուգել ուսանողների ձեռք բերված գիտելիքները, այլ նաև գործնական կիրառել նպատակների հասնելու հետ կապված վերապատրաստման տարբեր մեթոդներ և մոտեցումներ: Հոդվածը նվիրված է ժամանակակից կրթական համակարգում օտար լեզուների դասավանդման հարցում գիտելիքների որակի ստուգման վերահսկմանը: Թեստավորման մեթոդը թույլ է տալիս ոչ միայն ամրապնդել գիտելիքները և հմտությունները, այլև բացահայտել ուսանողների բացթողումները, թույլ տալ ուսուցիչներին դասավանդել հետագա ուսումնառությունը թեստերի արդյունքներին և ավելի մեծ ուշադրություն դարձնել վատ հասկանալի նյութի վրա: Օտար լեզուներով թեստեր պատրաստելիս անհրաժեշտ է ընտրել այնպիսի առաջադրանքներ, որոնք ներառում են բոլոր քերականական, լեզվական, հնչյունային ասպեկտները, ուսանողներին միևնույն թեմայով մի քանի վարժանքներ կատարել, նվազագույնի հասցնել այն հնարավորությունը, երբ ուսանողները ընտրում են ցանկացած պատասխանի տարբերակ: Թեստային առաջադրանքները ակտիվացնում են մտավոր գործունեությունը, սովորեցնում են ուսանողներին աշխատել ինքնուրույն:

Բանալի բառեր՝ *փորձարկում, ուսուցման մեթոդներ, հմտություններ, ուսուցման գործընթաց, ուսուցման գործընթացի շարժառիթ:*

Օտար լեզվի ուսումնական գործընթացի ստուգումը մեր դասավանդման կարևորագույն մասն է: Այն հնարավորություն է տալիս ոչ միայն ստուգել ուսանողի ձեռք բերած գիտելիքները, այլ նաև պրակտիկայում կիրառել զանազան մեթոդներ և մոտեցումներ՝ կապված ստուգման լայն և նեղ նպատակների հետ: Կրթության նպատակն է անձի զարգացումն ու ուսումնական գործընթացն իրականացնելու ունակ անհատի ձևավորումը:

Ուսանողներին խոսելու կամ գրելու տիրապետելու գործընթացը երկարատև, շարունակական աշխատանք է, և անհրաժեշտ է փոխգործակցություն: Լեզվական նյութը պետք է ներկայացվի աստիճանաբար՝ հիմնվելով նրանց խոսքի և քերականության հմտությունների ունակությունների վրա: Իհարկե, նյութի գիտելիքների մակարդակը և վարպետությունը տարբերվում են, ուստի անհրաժեշտ է անցկացնել պարբերական ստուգումներ դասընթացների ընթացքում ձևավորված որոշակի հմտությունների և ունակությունների տիրապետման մակարդակը որոշելու համար: Ստուգման ձևերն ու մեթոդները կարող են տարբեր լինել, սակայն վերահսկողության հիմնական նպատակն է բացահայտել բոլոր ուսանողների կողմից ուսումնասիրված նյութի ընկալման և հասկացման մակարդակը: Ավելին, ստուգումը պետք է ուղեկցվի հետագա վերլուծության և քննարկման միջոցով, որոշակի լեզվական նյութի յուրացման մեջ ուսանողների դժվարությունների կամ գիտելիքների բացերի բացահայտման և, իհարկե, ուսուցչի ինքնատիրապետման և որոշակի խմբի դասավանդման մեթոդների արդյունավետության ստուգման համար: Դրանք փոխադարձաբար պայմանավորված են միմյանցով:

Ուսումնական գործընթացում ստեղծագործական մթնոլորտի ձևավորման և ուսուցման գերխնդրի՝ գիտելիքներն անձի զարգացման միջոց դարձնելու ճանապարհին ուսանողը պետք է անցնի ճանաչողության հետևյալ փուլերը.

1. Գիտելիքի ձեռքբերում,
2. Իմաստավորում (հասկացում-յուրացում),

3. Կիրառում,

4. Նոր գիտելիքների ինքնուրույն ձեռքբերում /ընդհանրացում:

Այս շղթայի 4 օղակից յուրաքանչյուրն էլ կարևոր է: Դրանցից որևէ մեկի բացակայությունը կխոչընդոտի գիտելիքների, ունակությունների և հմտությունների ձեռքբերմանը: Այսինքն՝ կրթադաստիարակչական գործընթացի կամ դրա առանձին բաղադրիչների իրականացման արդյունավետությունը մեծապես պայմանավորված է ոչ միայն ուսանողների ձեռք բերած գիտելիքների կայունությամբ, ըմբռնման բազմակողմանիությամբ, այլև տարբեր պայմաններում դրանց ճկուն կերպով կիրառմամբ, նոր գիտելիքների ձեռքբերման ունակություններով, դրանց և հների միջև կապեր տեսնելու կարողություններով:

Ճանաչողության ուղու այս բաղադրամասերի իրականացման համար ուսումնական գործունեությունը պետք է ծառայի իր նպատակին. ոչ միայն ուսանողի գործունեությունը պիտի գնահատվի վերջնարդյունքում, այլև այն պիտի վերահսկվի ընթացքում: Առավել կարևորն այն է, որ արդյունքները պետք է վերլուծվեն:

Գնահատականը (նաև գնահատումն ընդհանրապես ունի բազմաթիվ գործառույթներ՝ գնահատող, ամփոփող, վերահսկող, ինքնավերահսկվող, խրախուսող-պարսավող, խթանող և այլն): Գործունեության արդյունքները հարկավոր է վերլուծել ըստ այդ գործառույթների: Գիտելիքների, ունակությունների և հմտությունների պարբերաբար հաշվառումը նպաստում է դրանց ընկալման և գիտակցման, իմաստավորման և մտապահման նպատակով սովորողների ծավալած գործողությունների ժամանակ ծագած խնդիրների բացահայտմանը, ինչպես նաև այդ գործողությունների և դրանց կառավարման եղանակների շտկմանը:

Անշուշտ, ուսանողների ուսումնական գործունեության ստուգումը պրակտիկայում իրականացվում է զանազան ձևերով, մեթոդներով՝ կապված ստուգման նպատակների հետ: Յուրաքանչյուր ուսումնական հիմնարկություն ստուգում է և կառավարվում տվյալ հաստատության համար ընդունելի մեթոդներով: Սակայն անկախ այդ զանազանությունից՝ ստուգման բոլոր համակարգերում էլ պահպանվում են նպատա-

կայնությունը, պարբերականությունը և օբյեկտիվությունը: Այս սկզբունքների հաշվառման դեպքում ապահովվում են՝

- գիտելիքների ստացման գործընթացի բազմակողմանիությունը,
- դրա բոլոր բաղադրիչների յուրացման մակարդակի որոշումը,
- ձևավորված ունակությունների և հմտությունների ստուգումը,
- ստուգման օպերատիվությունն ու արդիականությունը:

Ուսումնական գործունեության դաս-լսարանային համակարգում գոյություն ունեն ուսանողի աշխատանքի գնահատման և ստուգման ինչպես ձևավորված, գիտականորեն մշակված, այնպես էլ տարերային, պրակտիկայի վրա հիմնված ստուգման զանազան տեսակներ: Դրանց վերլուծության և ընդհանրացման արդյունքում Ն. Կարպովան (Интеллектуальная Система Тематического Исследования. 1998. Москва) մասնավորապես առանձնացնում է հետևյալ տեսակները.

Ստուգման տեսակները



Ստուգման տեսակների իրականացման համար ընտրվող մեթոդներն ունեն երկու նպատակադրում.

ա) տեսական գիտելիքների ստուգում, որի ժամանակ օգտագործվող մեթոդներն են՝

- բանավոր հարցում,
- գրավոր հարցում,

բ) գործնական ունակությունների և հմտությունների ձևավորման գործընթացի ստուգում՝ խոսքային դրսևորմամբ:

Ստուգման ձևերի ընտրությունը պետք է կատարի դասախոսը, ով որոշում է, թե որ եղանակն է նպատակահարմար տվյալ խմբի, թեմայի և

իր համար կարևոր խնդիրների լուծման գործում: Այդ ձևերը կարող են համակարգվել և ընտրվել՝ հաշվի առնելով ուսանողների քանակը, տեղը, գնահատման ձևը և այլն: Ըստ էության, բոլոր ձևերն էլ անհրաժեշտ և արդյունավետ են: Կարևորը դրանց ճիշտ և նպատակային ընտրությունն է:

Ստուգման ձևերն ըստ նպատակների՝

ա) Ըստ ներկայացման եղանակի՝
- գրավոր
- բանավոր

բ) Ըստ ստուգվողների քանակի՝
- անհատական
- ընդհանրական

գ) Ըստ գնահատականի տարբերակման՝
- առանց բալային գնահատականի
- չտարբերակված (ստուգարք)
- տարբերակված (քննություն)

դ) Ըստ ստուգվող նյութի ծավալի՝
- ընթացիկ (պարբերական)
- ժամանակահատվածային (ստուգարք)
- ամփոփիչ (քննություն)

ե) Ըստ ուսուցման նպատակի՝
- ուսուցողական
- բացատրամեթոդական:

Այժմ ներկայացնենք ուսանողների գիտելիքների, ունակությունների և հմտությունների ստուգման մեթոդները: Իհարկե, կան թեստերի ու հարցերի շատ տարբերակներ, բայց մենք ընտրել ենք մեր կողմից հաճախ օգտագործվող մի քանի վարժությունների տեսակներ:

1. Բազմակի ընտրություն (Multiple choice)

Ընտրեք ճիշտ բառը նախադասությունը լրացնելու համար:

Choose the correct word to complete the sentence.

Cook is _____today for being one of Britain's most famous explorers.

a) recommended b) reminded c) recognised d) remembered

Այս տեսակի վարժության մեջ կան մի քանի տարբերակներ, որոնցից ուսանողը պետք է ընտրի մեկը: Այս դեպքում առավելությունն այն է, որ պատասխանները հեշտ է նշել, և աշխատանքը շատ ժամանակատար չէ:

Բազմակի ընտրության վարժությունները կարելի է օգտագործել ստուգելու համար քերականությունը, բառապաշարը, ընթերցանությունը: Սակայն պետք է նշել, որ ուսանողները պարզապես կարող են գուշակել պատասխանները՝ առանց իմանալու ճիշտ տարբերակը:

2. Բաց թողնվածի լրացում (Gap-filling)

The food in the restaurant was terrible so we decided to l…… .

When I try to w……. I put my lips together but I can't do it!

Everyone nowadays knows the benefits of ..... exercise.

Ուսանողը լրացնում է նախադասության բաց թողնված մասը: Երբեմն կարելի է ընդգրկել հուշող մի ակնարկ, օրինակ՝ բառի առաջին տառը և այլն: Այս տիպի վարժությունները սովորաբար ստուգում են քերականությունը կամ բառապաշարը: Այստեղ կրկին թերությունն առանց մտածելու տարբերակ նշելն է: Դասախոսը պետք է դա հաշվի առնի, թեև որոշ դեպքերում կարող են լինել շատ ճիշտ պատասխաններ:

Gap-fill-ն կարող է կիրառվել բառապաշարի, քերականության ստուգման համար: Այն նաև շատ արդյունավետ է լսումների ժամանակ:

3.Համապատասխանեցում (Matching)

Match the word on the left to the word with the opposite meaning.

Գտնել նշված բառաշարքերում հականիշային զույգերը (Գտնել ձախ կողմում գրված բառին հակառակ իմաստով համապատասխան բառը):

fat	old
young	tall
dangerous	thin
short	safe

4.Հոմանիշներ և հականիշներ *(Synonyms and antonyms)*
Arrange the following words in the pairs of synonyms:

alleviate	disseminate
charity	piousness
inherent	indolent
linked with	declare
denomination	function
increase /n/	progress
piety	philanthropy
circulate	mitigate
activity	sect
idle	specific
usher in	bound with
leap	growth

Students are given a list of words, and they are required to give the words that have similar meanings (synonyms) or contrastive meanings (antonyms) with the words given.

Ուսանողներին տրվում են բառեր և պահանջվում է գտնել համապատասխան հոմանիշները և հականիշները:

Այս կարգի բառային վարժությունները երբեմն բավականին դժվար են ուսանողների համար, բայց հնարավորություն են տալիս ընդլայնել բառապաշարը՝ մտապահելով բառերի զույգեր և ոչ թե առանձին բառեր:

5. Հարցերի պատասխանում (Answer the questions)

1. What is social work?
2. What way does social work operate?
3. What does social work collaborate with?
4. What is the main task of social work?
5. What are the main values and principles of social work?

Կարելի է կազմել մի շարք հարցեր անցած մասնագիտական նյութերի, տեքստերի հիման վրա և ստուգել, թե ինչքանով է յուրացված տվյալ թեման: Հարցերը կարող են լինել ինչպես հատուկ, այնպես էլ ընդհանուր: Այս տիպի ստուգումները ավելի բարդ են և աշխատատար, քանի որ ակնկալվում է կոնկրետ նյութի իմացություն:

Ստուգումը կարելի է կազմակերպել նաև բանավոր՝ օգտագործելով փոխներգործական մեթոդներ: Ուսանողը պետք է կատարի հետևյալ քայլերը՝

1. կարդա անծանոթ տեքստը և վերարտադրի այն իր սեփական բառերով կամ կիրառելով հեղինակի բառերը: Այս ձևով ստուգվում է նրա բանավոր խոսքի ունակությունը և նոր բառերի օգտագործման կարողությունը: Տրվում է ժամանակ՝ 3-5 րոպե,

2. վերլուծի և արտահայտի իր տեսակետը թեմայի վերաբերյալ. Ի՞նչով է հետաքրքիր այս տեքստը, դուր եկա՞վ, թե՞ ոչ: Տրվում է ժամանակ՝ 5-7 րոպե,

3. շարունակի միտքը: Տրված տեքստին ավելացնի որոշ նախադասություններ՝ առաջարկելով նոր լուծումներ: Ժամանակ՝ 5 րոպե:

Առաջարկված վարժությունները դասավանդողներին կօգնեն ոչ միայն բացահայտել ձեռքբերումները, այլև որոշել այն թույլ կողմերը, որոնք նկատվում են ուսանողների գիտելիքների, ունակությունների և

հմտությունների դրսևորումներում: Մենք հոդվածում չանդրադարձանք գիտելիքների ստուգման ժամանակ ուսանողների ձեռքբերումների գնահատմանը: Մեր նպատակը բալային գնահատականը չէ: Այսպիսի ստուգման միջոցով կարելի է բարձր մակարդակով ու ճշգրիտ կերպով ստուգել ուսանողների գիտելիքները, ունակությունները և հմտությունները և հետագա ուսումնական գործընթացի պլանավորման ժամանակ վերլուծել դրանք:

Գնահատելը և գնահատականը դասախոս-ուսանող փոխգործակցության ու փոխազդեցության վերջին, ավարտական փուլն է, որը եթե իրականացվում է առանց ստուգման նշված չորս տեսակների, ապա հաճախ դառնում է սուբյեկտիվ: Կան խնդիրներ և դժգոհություններ ընթացիկ քննությունների գնահատման հետ կապված: Կարծիք է հայտնվում, որ սխալ գնահատումն աղավաղում է քննության և ստուգման էությունը, մենք ուսանողին ավելի շատ կենտրոնացնում ենք հենց գնահատականի վրա, ինչը նույնպես բացասական է ազդում ընդհանուր գիտելիքների միջավայրի ձևավորման վրա: Ակամա համակարգը ինքն է խրախուսում առանց այն էլ ուսանողների մոտ ձևավորված գնահատականի կարծրատիպը: «Գնահատականը գիտելիքի թիվ մեկ թշնամին է». այսպիսի պնդում հաճախ կարելի է լսել դասախոսների և ուսանողների հետ հարցումների ժամանակ: Այստեղ տեղին է նշել, որ գնահատականի հանդեպ հիմնական խնդիրը սուբյեկտիվության և արդարության հետ է կապված: Դասախոսները ժամանակի ընթացքում լսարանի հետ կապվածություն են ձեռք բերում, որը ուղղակի կամ անուղղակի ազդում է քննական գործընթացի վրա: Հաճախ քննական գործընթացը սթրեսային է ոչ միայն ուսանողների, այլ նաև դասախոսների համար:

Այսպիսով՝ ուսումնական գործընթացում առաջնային է դասընթացին սովորողների մասնակցությունը, նրանց անցած ճանապարհը, այդ ընթացքում ծավալված գործունեությունը և արդյունքում ձեռք բերած գիտելիքներն ու ունակությունները, դրանց ամբողջականությունն ու մտավոր կարողությունների զարգացումը: Անշուշտ, սրանք գնահատ-

ման ենթակա որակներ չեն: Աշխատանքի արդյունքի լավագույն գրավականը դասախոս-ուսանող ճիշտ հարաբերությունների ձևավորումն է:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Philida Schellekens** (2011), Teaching and Testing the Language Skills of First and Second Language Speakers, Produced for Cambridge ESOL.
2. **Chen Desheng, Ashitha Varghese** (2007), Testing and Evaluation of Language Skills, Bharathiar University, Coimbatore.
3. **Rossi, P.H. Lipsey, M.W., & Freeman, H.E.** (2004), Evaluation: A systematic approach (7th ed.)
4. **Н.В. Карпова** (1998), Интеллектуальная Система Тематического Исследования. Москва.

Խալաթյան Լ. – դասախոս, ԵՊՀ եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետ, անգլերենի թիվ 1 ամբիոն
e-mail: li.khalatyan@ysu.am
Միրիմանյան Ս. - դասախոս, ԵՊՀ եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետ, անգլերենի թիվ 1 ամբիոն
e-mail: susanamirimanyan@inbox.ru

Ներկայացվել է խմբագրություն՝ 10.04.19, տրվել է գրախոսության՝ 16.04.19-23.04.19, երաշխավորվել է ԵՊՀ եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետի անգլերենի թիվ 1 ամբիոնի կողմից, ընդունվել է տպագրության՝ 03.05.19

Կարապետյան Մ.
Երևանի պետական համալսարան

ԻՐԱՎԱԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՄԻՋԳԻՏԱԿԱՐԳԱՅԻՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ABSTRACT
LEGAL LINGUISTICS AS AN INTERDISCIPLINARY SCIENCE

In the field of jurisprudence it can be seen that a social order for the study of linguistic rights has been formed in the society. Despite the fact that laws are being created for many centuries, there are still no strict rules for language use. On the one hand, this is the problem of linguists. On the other hand, the viewpoint of lawyers can be more useful than simple language studies, to isolate and simplify the peculiarities of legal texts.

Thus, there is a need to create a new interdisciplinary science, a legal linguistics that will allow solving any problem in the linguistic dimension.

Key words: *The correlation of law and language, Legal language, Legal linguistics.*

РЕЗЮМЕ
ЮРИСЛИНГВИСТИКА КАК МЕЖДИСЦИПЛИНАРНАЯ НАУКА

В области юриспруденции видно, что в обществе сформировался социальный заказ на изучение языковых прав. Несмотря на то, что законы создавались на протяжении многих веков, до сих пор нет строгих правил использования языка. С одной стороны, это проблема лингвистов. С другой стороны, точка зрения юристов может быть более полезной, чем простое изучение языка, и позволит изолировать и упростить особенности юридических текстов. Таким образом, существует необходимость создания новой междисциплинарной науки, юрислингвистики, которая позволит решить любую проблему. в лингвистическом измерении.

Ключевые слова: *соотношение права и языка, юридический язык, юрислингвистика.*

ԱՄՓՈՓՈՒՄ

Իրավագիտության ոլորտում կարելի է նկատել, որ հասարակության մեջ ձևավորվել է լեզվական իրավունքի ուսումնասիրման «սոցիալական պատվեր»: Չնայած այն բանին, որ դարերի ընթացքում շատ օրենքներ են ստեղծվում, բայց դեռևս գոյություն չունեն լեզվի կիրառման խիստ կանոններ: Մի կողմից, սա լեզվաբանների խնդիրն է. Իրավաբանական տեքստերի լեզուների առանձնահատկությունները մեկուսացնել և պարզեցնել, մյուս կողմից, իրավաբանների տեսակետը կարող է ավելի օգտակար լինել, քան պարզ լեզվական ուսումնասիրությունները:

Այդպիսով, անհրաժեշտություն է առաջանում նոր միջգիտակարգային գիտության՝ իրավալեզվաբանության ստեղծման, որը հնարավորություն կտա լուծելու ցանկացած խնդիր լեզվաիրավաբանական հարթությունում:

Բանալի բառեր՝ *իրավունք-լեզու փոխհարաբերություն, իրավաբանական լեզու, իրավալեզվաբանություն:*

Ժամանակակից գիտություններին բնորոշ են միջգիտակարգային կապերը, որոնք արդյունավետ են և հարստացնում են փոխկապակցված գիտությունները: Ինչպես նշում են հոգելեզվաբանները. «սահմանային գիտակարգերի ստեղծումը, որոնք միևնույն երևույթը դիտարկում են տարբեր տեսանկյուններից, ամենևին չի նշանակում նոր հարացույցի անհրաժեշտություն, ընդհակառակը, առկա օբյեկտը խորապես ուսումնասիրվում է երկու գիտությունների տեսանկյունից, և ի հայտ են գալիս այդ նույն օբյեկտի ոչ հայտնի առանձնահատկությունները (Пищальникова 2005:65):

Իրավական փաստաթղթերի լեզուն հաճախ անկատար է. Մի կողմից, ունի խիստ պաշտոնական կառուցվածք, մյուս կողմից՝ իրավաբանի «չոր լեզուն» միշտ չէ, որ համապատասխանում է արդիականության պահանջներին: Ներկայումս, գիտելիքի այնպիսի ոլորտները, ինչպիսիք են իրավալեզվաբանությունը և լեզվաիրավաբանությունը, ակտիվորեն զարգանում են, քանի որ լեզվի գրագիտության, իրավական ակտերի ճշգրտության և հուսալիության հարցն այսօր ավելի հրատապ

է: Իրավաբանական և լեզվական ուսումնասիրությունների առարկան լեզվական և իրավունքի փոխհարաբերությունն է՝ լեզու-իրավունքի հարաբերակցությունը ուսումնասիրում է լեզվաիրավաբանությունը, իրավունք-լեզու փոխհարաբերությունը՝ իրավալեզվաբանությունը: Լեզվի իրավական կողմը այն «բնական» արտահայտություններն են, որոնք «ինքնըստինքյան» պարունակում են օրենքի տարրեր, որոնցից յուրաքանչյուրի մեջ կարելի է գտնել իրավականացման պոտենցյալներ: Խոսելով բնական լեզվի իրավականացված դրսևորումների մասին՝ մենք, առաջին հերթին, խոսում ենք լեզվական նորմերի մասին (Голев 2000:8-39):

Այս պարագայում մեծ նշանակություն ունի օրենքի որոշակի հոդվածների վերլուծության միջոցով իրավաբանական անձանց իրավական լեզվի և դրա կիրառման փոխհարաբերությունները: Սա հենց այն է, ինչ խոսում է նոր մասնագիտացված հայեցակարգի ձևավորման անհրաժեշտության մասին:

Իրավագիտության ոլորտը ներառում է օրենքի տեքստում տեղ գտած բնական լեզվով օրենքները, շատ առումներով նրանք որոշում են ինչպես դրա ստեղծումը, այնպես էլ կիրառումը իրավական պրակտիկայում:

Լեզվաբանության տեսանկյունից առաջինը կարելի է դիտարկել լեզվի իրավական կողմը, այս առումով իրավական ուսումնասիրության առարկան լեզուների իրավականացմանն ու լեզվի վերաբերյալ մարդկանց փոխհարաբերություններին հանգեցնող գործընթացներն են. երկրորդը՝ իրավական լեզվի մետալեզվաբանական կողմն է, նրա ստուգաբանական հիմքը իրավական լեզուն է: Առաջին ուղղությամբ լեզուն, լեզվակիրները իրավունքի օբյեկտն ու սուբյեկտն են, երկրորդը՝ լեզուն ներկայացված է որպես մի միջոց, որը մի կողմից, ստեղծում և բացատրում է օրենքը (իրավական ոլորտում բնական լեզվով օրինաստեղծ և մեկնաբանական գործառույթներ) և մյուս կողմից, օրենքի կիրառում, որտեղ լեզուն փորձագիտության առարկա (կամ միջոց) է (լեզվի իմացության գործնական գիտելիքների լեզվափորձագիտական

գործառույթը և լեզվի տեսական գիտելիքը, որը պահանջում է հղում հատուկ լեզվական իրավասությանը):

Ե՛վ իրավաբանները, և՛ լեզվաբանները, ուսումնասիրում են օրենքի և լեզվի միջև հարաբերությունները համեմատաբար երկար ժամանակ, և չնայած այն հանգամանքին, որ հին Հռոմում (որտեղ իրավագիտությունը որպես գիտություն սկզբնապես ծնվեց) «իրավաբանական լեզու» հասկացությունը գոյություն չուներ, այնուամենայնիվ, այժմ էլ հայտնի իրավաբանները արտահայտում են այն գաղափարը, որ իրավական տեքստը պետք է պարզ, մատչելի և ճշգրիտ լինի իր բովանդակության մեջ և միևնույն ժամանակ հասկանալի լինի «սովորական» քաղաքացու և արհեստավարժ փաստաբանի համար: Այդ իսկ պատճառով, անհիշելի ժամանակներից սկսած, օրենսդրության մշակույթը ենթադրում է օրենքի տեքստի համահունչ ներկայացում. նրա խիստ պահպանված մասնագիտական ոճը և լեզուն:

Իրավաբանական լեզվաբանությունը կամ իրավալեզվաբանությունը լեզվաբանության մեջ նոր, առավել քիչ ուսումնասիրված երևույթ է, չնայած այն հանգամանքին, որ իրավունքի և լեզվի ուսումնասիրությամբ զբաղվում են և՛ իրավաբանները, և՛ լեզվաբանները: Այն ընկած է լեզվաբանության և իրավաբանության միջև և կրում է միջգիտակարգային բնույթ: Իրավալեզվաբանության առաջացման անհրաժեշտությունը ծագում է լեզվական նորմի և իրավական նորմի հարաբերակցությունից և այն իրադրություններից, որտեղ այս երկու նորմերը հարաբերվում են: Եթե լեզվի և իրավունքի նորմերը վերացական բնույթ են կրում, ապա իրադրությունն ավելի հստակ է:

Որպես իրավագիտության մասնաճյուղ, դա լեզվաբանության համեմատաբար նոր ոլորտ է, որը մշակվում է իրավաբանների և լեզվաբանների աշխատանքի շնորհիվ, որոնք աշխատում են միասին, և գտնվում են լեզվի և իրավունքի հանգույցում:

Ներպետական իրավունքի դաշտում, նորմատիվ իրավական ակտերի (օրենքների) լեզվի և ոճի առաջին հիմնարար ուսումնասիրությունները հիմնականում իրականացվել են 1990-ականներին: Այդ ժա-

մանակ գիտնականները հիմնականում ուսումնասիրում էին նորմեր գրելու համար օգտագործվող լեզվի գործառական ոճը: Միևնույն ժամանակ, հետազոտողները նպատակ են դրել ձևավորել ընդհանուր կանոնների մշակման այնպիսի ձև, որ դրա կիրառման մեջ որևէ վեճ չառաջանա:

Ներկայումս իրավալեզվաբանությունը կոչված է լուծելու ցանկացած խնդիր լեզվաիրավական հարթության մեջ, ինչպես օրինակ՝

1) Լեզվական կոնֆլիկտների իրավական կարգավորման սկզբունքները:

2) Իրավաբանական լեզվի մշակումը (օրենքի լեզուն), որը կարող է ծառայել հատուկ իրավական հաղորդակցությանը և ամենօրյա հաղորդակցությանը:

3) Օրենքների և այլ իրավական ակտերի տեքստերի մշակման վերաբերյալ առաջարկությունների ստեղծումը:

4) Իրավաբանական գործունեության տերմինաբանական, թարգմանչական և բառապաշարային աջակցությունը:

5) Պետական լեզվի և լեզվի քաղաքականության իրավական լեզվական ասպեկտների ուսումնասիրությունը և գործնական զարգացումը:

6) Բնակչության լեզվաիրավական իրազեկությունը:

7) Իրավաբանների լեզվական կրթությունը:

8) Լեզվաիրավական գիտակցության ուսումնասիրությունը:

9) Իրավական փաստաթղթերի լեզվական փորձաքննություն:

10) Իրավաբանական թարգմանության բնագավառում տեսական և գործնական հետազոտություններ:

Սա իրավալեզվաբանության գլխավոր, բայց ոչ ամբողջական խնդիրներն են, չնայած, նույնիսկ այս ցուցակը բավական է հասկանալու համար, որ այս գիտության ծավալը բավականին լայն է և այսօր նրա նշանակությունն արդարացիորեն մեծ է: Օրենքի տրամաբանությունը, ոճը և լեզուն՝ օրենսդրական տեխնիկայի տարրերը, որոնց գործառութային նպատակն է ապահովել օրենսդրությամբ սահմանված իրավա-

կան ակտերի, իրավունքի սուբյեկտների կողմից օրենքի գերակայության պահանջների ճիշտ ընկալումը (Чухвичев 2005:140-142):

Դժվար է չափազանցել օրենքի ձևավորման համար ոճի և լեզվի կարևորությունը, քանի որ դժվար է անվանել սոցիալական պրակտիկայի որևէ այլ ոլորտ, որտեղ սխալ ձևակերպված արտահայտություն, մտքի և դրա տեքստային արտահայտության միջև բացը, սխալ կամ ոչ պատշաճ օգտագործված խոսքը կարող է հանգեցնել այնպիսի ծանր հետևանքների, որքան օրենսդրությունը: Օրենքի տրամաբանության խախտումը, դրա ձևակերպումների անճշտությունները, օգտագործված տերմինների անորոշությունը բազմաթիվ հարցեր են առաջացնում, հանգեցնում են լրացումների, մեկնաբանությունների և բացատրությունների, հանգեցնում են ժամանակի, ջանքերի և էներգիայի անարդյունավետ վատնելուն և միևնույն ժամանակ թույլ են տալիս խեղաթյուրել օրենքի իմաստը և սխալ կիրառել: Ահա թե ինչու ինչքան ավելի կատարյալ է օրենքի տեքստը, այնքան քիչ է դրա կիրառման դժվարությունները: Այսպիսով, ոճը և լեզուն ծառայում են որպես օրինաստեղծ հիմք:

Այնուամենայնիվ, չպետք է մոռանալ, որ օրինագծի մշակումը պահանջում է օրենսդիրի որոշակի անձնական հատկանիշներ. մտքի հստակություն, վերլուծական միտում, լեզվական իմացություն, թղթի վրա մտքեր արտահայտելու ունակություն վիճարկելու և պաշտպանելու դիրքորոշում, ստեղծագործական երևակայություն և ողջախոհություն, պրագմատիզմ և օբյեկտիվություն: Տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործումը թույլ է տալիս օրենսդիրին ռացիոնալացնել տերմինաբանության ընտրությունը և իրականացնել պայմանների միավորում, սակայն մշակողների ինտուիցիան և ստեղծագործական ջանքերը կարող են մեծ դեր խաղալ օրինագծում:

Անհիշելի ժամանակներից խոսքի և օրենքի հարաբերակցության հարցերը անհանգստացրել են փաստաբաններին: Հնագույն ժամանակներից սկսած՝ դատական գործընթացներում կարևորություն էր տրվում երդում տալը որպես ասվածի հավաստիացմանը, ինչպես նաև

վկաների կողմից տրված ցուցմունքը: Դրա օրինակն է 18-րդ դարում հրապարակված Համմուրապիի օրենքները (մ.թ.ա. 18-րդ դ.) և Մանուի հին հնդկական օրենքները, որոնք թվագրվում են մ.թ.ա. կամ մ.թ. 2-րդ դար: Վերջինիս հոդվածներից մեկում ասվում է. «Մենք պետք է խոսենք ճշմարտությունը, հաճելի խոսենք, չպետք է խոսենք տհաճ ճշմարտության մասին, չպետք է խոսենք հաճելի ստի մասին, սա է հավերժական սհարման»: Սոկրատը և Պլատոնը, օրենքի խոսքում, տեսնում էին իրենց նախնիների իմաստնության և գիտելիքների փոխանցումը: Չնայած դատական վարույթի և օրենսդրության զարգացմանը, լեզուների և իրավունքի փոխհարաբերությունների խնդիրները համակարգված և համակողմանիորեն ուսումնասիրվել են գիտնականների կողմից միայն 20-րդ դարի վերջին:

Իրավաբանական և լեզվական ուսումնասիրությունների ընդհանուր առմամբ ընդունված առարկան լեզվական և իրավունքի փոխհարաբերությունն է՝ լեզու-իրավունքի հարաբերակցությունը ուսումնասիրում է լեզվաիրավաբանությունը, իրավունք-լեզու փոխհարաբերությունը՝ իրավալեզվաբանությունը:

Իրավալեզվաբանության խնդիրն է լեզվական հետազոտություն կատարել՝ պատրաստվող օրենսդրական ակտերը, իրավական փաստաթղթերն ու նյութերը՝ հաշվի առնելով լեզվի որոշակի առանձնահատկությունները և պահանջները: Այսպիսով, որպես լեզվաբանության մի մաս, այն ուսումնասիրում է առաջարկվող իրավական նյութերի համապատասխանությունը հնչյունաբանության, բառագիտության, ձևաբանության, շարահյուսության, խոսքի մշակույթի, հռետորության տեսանկյունից, գործող օրենքի պահանջներին համապատասխան՝ իրավագիտության և պետական լեզուների օրենքների շրջանակներում: Իրավաբանական մեկնաբանության անհրաժեշտությունը նրանում է, որ հաճախ նորմերի լեզուն և այս կամ այն իրավիճակի (միջադեպ) լեզուն տարբերվում են: Նորմերի և իրավունքի լեզուները ընդհանուր են և վերացական բնույթ են կրում, իսկ իրավիճակը, ընդհակառակը, միշտ էլ կոնկրետ և անհատական է: Օրենքի որոշ նորմերի կապը ուրիշների

հետ, մի նորմայից մյուսի հղումների առկայությունը, անշուշտ, օրենսդրության իրավական տեխնիկայի թերությունն է, սակայն դրանք եղել են, կան և կլինեն: Ահա թե ինչու ավելի ու ավելի մեծ նշանակություն ունի նորմերի գրագետ և բազմակողմանի մեկնաբանումը:

Իրավալեզվաբանությունը, որպես միջգիտակարգային գիտություն, նպաստում է տեքստի ուղղակի իմացությանը և ապահովում է ուսումնասիրություն, օրենքի բովանդակության խորացում, տեղեկատվության ստացում, որն արտացոլում է դրանց իմաստը: Իրավալեզվաբանության շնորհիվ, օրենքի նորմերի իմաստը հասկանալի է մի քանի «շերտերի» միջոցով, լեզվի իմացություն, իրավունքի նորմի համակարգված կապի իմացություն, դրանց ծագման և գործունեության մասին իմացություն: Այսպիսի գիտելիքները համապատասխանում են մեկնաբանման եղանակներին՝ լեզվական, համակարգային, պատմական և գործառութային: Բացի այդ, այն օգտագործում է իրավական նորմի բովանդակությունը. այս նյութը գործածելով տրամաբանական մեթոդների միջոցով՝ թույլ է տալիս հասկանալ և ընդլայնել նորմերի բովանդակությունը: Սա տրամաբանորեն վերլուծության մեթոդ է, որտեղ թարգմանիչը հիմնականում առնչվում է տերմինների բառաիմաստաբանական առանձնահատկություններին:

Իրավալեզվաբանության հիմնական խնդիրներից մեկը իրավական տերմինների մեկնաբանումն է, որոշակի մասնագիտական բառերի օգտագործման առանձնահատկությունները տարբեր իրավական պայմաններում ուսումնասիրելը: Լեզվաբանական մեկնաբանությունը ոչ միայն օբյեկտիվ գործընթաց է, քանի որ գիտելիքի առարկան միշտ էլ անկախ է գիտելիքի սուբյեկտից, այլև սուբյեկտիվ գործընթաց, քանի որ իրականացվում է կոնկրետ առարկայի միջոցով, և դրա արդյունքը արտահայտվում է սուբյեկտիվ մտածելակերպի ձևով: Իրականում տեսականորեն և գործնականում կան իրավալեզվաբանական երկու մոտեցումներ՝ ստատիկ և դինամիկ: Ստատիկ մոտեցմամբ, իրավունքի կայունությունն ու հստակությունը համարվում են իրավական գործունեության հիմնական արժեք: Շեշտը դնելով դրա վրա՝ հետազոտողը պետք է

հաստատի այն նշանակությունը, որ օրենսդիրը տվել է նրան: Դինամիկ մոտեցմամբ, հետազոտողը փորձում է ճշգրիտ ուսումնասիրել պայմանների իմաստը, բովանդակությունը և իմաստաբանությունը: Հետևաբար, իրավալեզվաբանական վերլուծության ժամանակ, կարելի է նկատել ստատիկ մոտեցումից դեպի դինամիկ մոտեցման շարժը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Голев Н.Д** (2000), Юридизация естественного языка как лингвистическая проблема // Юрислингвистика-2. – Барнаул, – С. 8–39.
2. **Губаева Т.В.** (2014), Язык и право. Искусство владения словом в профессиональной юридической деятельности. – М. Изд-во: «Норма Инфа-М». – 2014. – 176 с
3. **Пищальникова В.А.** (2005), История и теория психолингвистики. Ч. 1. М., 2005
4. **Ушаков А.А.** (2005), О понятии юридической техники и ее основных проблемах // Уч. зап. Пермского гос. ун-та. Юридические науки. Т. 19. Вып. 5. Пермь, 1961. – С. 77.
5. **Чухвичев, Д. В.** (2005), Логика, стиль и язык закона // Право и политика. - 2005. - № 2. - С. 140-142
6. **Щерба Л.В.** (2004), Языковая система и речевая деятельность. - Изд. 2-е, стереотипное. М.: Едиториал УРСС. – 2004. - 432 с.

Կարապետյան Մ. – դասախոս, ԵՊՀ եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետ, անգլերենի թիվ 1 ամբիոն

e-mail: mariamkarapetyan@ysu.am

Ներկայացվել է խմբագրություն՝ 15.04.19, տրվել է գրախոսության՝ 16.04.19-23.04.19, երաշխավորվել է ԵՊՀ եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետի անգլերենի թիվ 1 ամբիոնի կողմից, ընդունվել է տպագրության՝ 03.05.19

Հովհաննիսյան Ա.
Շիրակի պետական համալսարան

VO ԿԱՂԱՊԱՐՈՒՄՆԵՐԸ ԱՆԳԼԵՐԵՆՈՒՄ ԵՎ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

ABSTRACT
ON THE WORD ORDER OF VO IN ENGLISH AND ARMENIAN

It's well- acknowledged that common typological features of languages are determined by their structural and syntactic traits. Already in the 50's of the last century the smallest syntactic unit (word combination) became an object for typological studies. The relations reigning in the model "subject-predicate-object" and their patterning in various languages – analyzed. In the frame of this article an attempt is made to define VO (predicate + object) modeling in English and Armenian, their universals and typological traits.

The cases of preposition and postposition of direct and indirect object in relation to the verb are introduced.

The study of factual material reveals also very specific cases for typological study.

Key words: *word–order, preposition, postposition, universal, typological trait, modeling.*

РЕЗЮМЕ
К ВОПРОСУ О ПОРЯДКЕ VO
(на материале английского и армянского языков)

Известно, что общие и типологические особенности языков определяются их структурными и синтаксическими характеристиками. Еще в 50-ые годы прошлого столетия минимальные синтаксические единицы – словосочетания – впервые стали объектом типологических исследований.

Предметом исследования стали модели «подлежащее – сказуемое – дополнение» и способы их реализации в разных языках.

В рамках данной статьи делается попытка определить типы моделирования VO в английском и армянском языках. Выявляются как их универсальные, так и типологические особенности. Даются случаи препозиции и постпозиции прямых и косвенных дополнений в сопоставляемых языках.

Анализ фактического материала выявил примеры моделирования, представляющие особый интерес для типологии.

Ключевые слова: *порядок слов, универсалии, препозиция, постпозиция, типологические характеристики, моделирование.*

ԱՄՓՈՓՈՒՄ

Անհերքելի ճշմարտություն է, որ լեզուների ընդհանուր տիպաբանական առանձնահատկությունները որոշարկվում են ինչպես նրանց կառուցվածքային, այնպես էլ շարադասական-շարահյուսական բնութագրերով:

Դեռևս անցյալ դարի 50-ականներին շարահյուսական նվազագույն միավորները (բառակապակցությունները) առաջին անգամ դարձան տիպաբանական վերլուծության առարկա: Քննության ենթարկվեցին այն հարաբերությունների բնույթը, որոնք իշխում են ենթակա- ստորոգյալ- խնդիր եռանդամ կառույցի ներսում և դրանց կաղապարումները տարբեր լեզուներում:

Սույն հոդվածի շրջանակներում փորձ է արվում որոշարկել VO (ստորոգյալ+խնդիր) կապակցելիության եղանակները անգլերենում և հայերենում, սահմանվում են ընդհանուր տիպաբանական առանձնահատկությունները՝ հայերենի հարաբերմամբ: Տրվում են ուղղակի և անուղղակի խնդիրների նախադաս կամ ետադաս շարադասության դեպքերը բայի հարաբերմամբ: Փաստացի նյութի քննությունը ցույց է տալիս, որ բացի շարադասության ընդհանուր դեպքերից, որոնք օրինաչափ են լեզուների համար, դիտվում են նմանապես հետաքրքրական կաղապարումներ, որոնք խիստ կարևոր են տիպաբանական վերլուծությունների համար:

Բանալի բառեր՝ *շարադասություն, նախադաս և ետադաս դասավորվածություն, ընդհանրույթ, տիպաբանական առանձնահատկություն, կաղապարում:*

«Նախադասությունները իրենց կառուցվածքով հասնում են այնպիսի բարդության, տարբեր մասերի և անդամների շղթայակացման այնպիսի նրբության, որ դա կարելի է համարել լեզվական մշակույթի խոշորագույն նվաճումներից մեկը» (Առաքելյան Վ., 1958):

Ահա թե ինչու նախադասությունը, որպես լեզվամշակութային իրողություն, հաճախ է հայտնվում տիպաբանական վերլուծությունների կիզակետում: Իսկ այս դեպքում մեզ հետաքրքրում է նախադասության շրջանակներում ստորոգյալ-խնդիր հարաբերակցումը: Ինչպիսի՞ լեզվական կաղապարումներով են իրացվում ստորոգյալը և խնդիրը զուգադրվող լեզուներում և ինչպիսի՞ն է նրանց շարադասությունը:

Առաջադրված նպատակը որոշարկում է հետազոտության մեթոդաբանությունը: Ելակետային ենք համարել չափանմուշային սկզբունքը: Եվ այս ընտրությունը խիստ արդարացված է, քանի որ մեր դեպքում անգլերենի տիպաբանական առանձնահատկությունները սահմանվում են մեկ այլ լեզվի՝ հայերենի տիպաբանական յուրահատկությունների նկարագրմամբ:

Անհերքելի ճշմարտություն է, որ լեզուների ընդհանուր տիպաբանական առանձնահատկությունները որոշարկվում են ինչպես նրանց կառուցվածքային, այնպես էլ շարադասական – շարահյուսական բնութագրերով:

Շարահյուսական նվազագույն միավորները՝ բառակապակցությունները, առաջին անգամ հետաքրքրության առարկա են դարձել անցյալ դարի 50-ականներին ֆրանսիացի լեզվաբան Լ. Տենիերի կողմից, ով առավելապես հետաքրքրված էր անվանական *ածական+գոյական* կապակցության լեզվական հնարավոր իրացումներով: Ավելի ուշ ամերիկացի լեզվաբան Ջ. Գրինբերգը ընդլայնեց հետազոտության այս շրջանակը և առաջարկեց շարահյուսական մակարդակի համար տիպաբանական վերլուծության նոր սկզբունք: Ըստ այս սկզբունքի՝ տիպաբանական առանձնահատկությունների սահմանման համար անհրաժեշտ է ուսումնասիրել այն հարաբերությունները, որոնք իշխում են ենթակա-բայ-խնդիր (SVO) եռանդամ կառույցի ներսում: Լեզվաբանի դիտարկմամբ ենթակա-բայ (ստորոգյալ) կառույցն իրացվում է լեզուներում՝ VSO, VOS, OVS, OSV, SVO բանաձևումներով, որոնցից առավել տարածված են SVO և VOS կաղապարները:

Լեզվաբանի դիտարկումները բացահայտեցին մեկ շատ կարևոր օրինաչափություն. Եթե այս եռանդամ կառույցում առանձնացնենք ենթակա-խնդիր օղակը (SO), ապա քննության առնված լեզուներում ենթական 96% հարաբերակցությամբ նախորդում է խնդրին: Եվ սա ունի իր տրամաբանական մեկնությունը. «…քանի որ ենթական նախադասության այն անդամն է, որից գլխավորապես սերվում է գործողությունը, մինչդեռ խնդիրը այն անդամն է, որ կրում է իր վրա այս գործողությունը» (Comrie 1981):

Ջ. Գրինբերգի լեզվական ընդհանրույթների տեսությունը իր տրամաբանական զարգացումը գտավ Վ. Լեհմանի աշխատություններում: Գրինբերգի եռանդամ շարահյուսական կառույցը փոխարինվեց Լեհմանի տեսություններում երկանդամությամբ, որում բանաձևվում է ստորոգյալ-խնդիր (VO) հարաբերությունը իր հնարավոր լեզվական բոլոր կաղապարումներով տարբեր լեզուներում: Ըստ լեզվաբանի առաջադրած վարկածի՝ այն լեզուներում, որտեղ գերիշխում է VO հաջորդականությունը, կարելի է ենթադրել, որ նմանատիպ լեզուներում գոյականը միշտ նախադաս է ածականի (որոշչի) հարաբերմամբ, սեռական որոշիչը հաջորդում է գոյականին, ժխտական ցուցիչը դրվում է բայից առաջ և այլն: Իսկ ինչ վերաբերում է բառակազմական հնարավոր միջոցներին, ապա այս կառուցվածքային տիպաբանությամբ լեզուներում առավելապես կենսունակ է նախածանցումը: Մինչդեռ OV շարադասությամբ լեզուներում բառակազմական միջոցներից առավելապես կենսունակ է վերջածանցումը, ածականը (որոշիչը) և սեռական որոշիչը նախադաս դիրքում են գոյականի հարաբերմամբ, մակբայը նախորդում է բային և այլն:

Թերևս Լեհմանի տեսությունը նախադասության նվազագույն անդամի տիպաբանության վերաբերյալ կարելի է ընդունել միայն որպես վարկած, քանի որ առաջադրված համամասնությունը խախտվում է, նույնիսկ եթե փորձենք այն կիրառել մեկ լեզվի շարահյուսական նվազագույնի քննության ժամանակ: Այսպես օրինակ՝ եթե ելնենք անգլերենի կառուցվածքից, ապա նրան հիմնականում բնորոշ է VO դիրքային

դասավորվածությունը: Սակայն սրան զուգահեռ անգլերենին օրինաչափ է ածականի ետադաս շարադասությունը, սեռական որոշչի շարադասությունը գոյականից հետո (the house of John):

Անգլերենի լեզվական համակարգը հարուստ է բազմագործառութային նախդիրներով, և լեզվում շատ կենսունակ է վերջածանցումը. լեզվական իրողություններ, որոնք օրինաչափ են OV կառուցվածքայնությամբ լեզուներին և բնորոշ չեն VO տիպաբանությամբ լեզուներին: Ասվածից հետևում է, որ անգլերենում հատկապես կիրառելի են VO և OV բանաձևումները: Եվ երկրորդ, Լեհմանի տեսությունում, ըստ մեզ, հիմնավորում չի ստանում մի շատ կարևոր հարցադրում՝ ինչ սկզբունքայնությամբ է հարաբերվում VO բայական դիրքային հաջորդականությունը, ասենք, անվանական (ածական+գոյական) կառույցի շարադասության կամ նախածանցման հետ: Այնուհանդերձ, Լեհմանի տեսությունը, շարահյուսական երկանդամ նվազագույնի մասին, ընդուվեց Ա. Հոկինսի և Թ. Վենեմանի կողմից, սակայն որոշակի վերապահումով: Ըստ լեզվաբանի՝ երկբաղադրիչ անդամների հարաբերակցության բնույթը սահմանվում է բոլորովին այլ սկզբունքայնությամբ՝ գերադաս անդամների դիրքային հաջորդականության բնույթով: Ուղղորդվելով այս սկզբունքայնությամբ՝ նա լեզուները բաժանում է երկու խմբի՝ 1. լեզուներ, որոնցում շարահյուսական նվազագույն միավորը բանաձևում է գլխավոր անդամ – ստորադաս անդամ (head- dependent) հարաբերությամբ, 2. լեզուներ, որոնցում բառակապակցությունը կաղապարվում է ստորադաս-գլխավոր (dependent-head) իրացմամբ: Քանի որ անվանական երկանդամ կառույցի տիպաբանական առանձնահատկությունը որոշարկվում է նրա բաղադրիչների գերադաս կամ ստորադաս դիրքային հաջորդականությամբ, ուստի և այս տրամաբանությամբ էլ բացատրվում են ստրորգյալ–խնդիր (VO) և խնդիր–ստորոգյալ (VO) բայական կապակցության շարադասության տիպաբանությունը:

Ջ. Հոկինսը համակարծիք է Թ. Վենեմանի գլխավոր–ստորադաս երկբաղադրիչ կապակցության բանաձևմանը, սակայն ըստ լեզվաբանի, այս կաղապարումը լիարժեքորեն չի բացահայտում շարահյուսական

